

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2000թ. հունվար-հունիսին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության զնահատման, բեռնափոխադրումների ծավալը կազմել է 1880.2 հազ. տոննա, որը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ նվազել է 16.0 տոկոսով: Բեռնաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 1132.8 մլն. տոննա-կմ (ներառյալ խողովակաշարային տրանսպորտը) և նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ մնացել անփոփոխ:

2000թ. հունվար-հունիսին, բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշները, տրանսպորտի առանձին տեսակների կտրվածքով

	2000թ. հունվար-հունիս	2000թ. հունվար-հունիսը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ, տոկոսներով	2000թ. հունիս	2000թ. հունիսը 2000թ. մայիսի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա այդ թվում՝	1880.2	84.0	269.0	78.4
Երկաթուղային տրանսպորտով որից	612.2	89.4	72.2	47.2
արտահանվել են բեռներ	68.7	65.7	10.4	48.6
ներկրվել են բեռներ	425.4	124.4	44.4	47.8
ներհանրապետական փոխադրումներ	118.1	49.6	17.4	45.0
ավտոտրանսպորտով որից	767.1	73.2	139.6	106.9
արտահանվել են բեռներ	21.7	43.6	3.8	69.1
դրանից				
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով	5.9	49.2	1.4	107.7
ներկրվել են բեռներ	104.2	96.3	19.1	90.1
դրանից				
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով	23.1	83.0	3.1	73.8
ներհանրապետական փոխադրումներ	641.2	72.0	116.7	112.3
օդային տրանսպորտով որից	5.9	107.3	1.4	155.6
արտահանվել են բեռներ	2.6	162.5	0.7	233.3
ներկրվել են բեռներ	3.3	84.2	0.7	166.7
խողովակաշարային տրանսպորտով	495.0	99.0	55.8	94.9

Երկաթուղային տրանսպորտ: 2000թ. հունվար-հունիսին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 1999թ հունվար-հունիսի նկատմամբ նվազել է 10.6 տոկոսով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 69.5 տոկոս (1999թ. հունվար-հունիսի՝ 49.9 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 11.2 տոկոս (1999թ. հունվար-հունիսի՝ 15.3 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 19.3 տոկոս (1999թ. հունվար-հունիսի՝ 34.8 տոկոսի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2000թ. հունվար-հունիսին 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ քարածխի փոխադրման ծավալն ավելացել է 3 անգամ, հացահատիկի և աղացվող մթերքներինը՝ 96.7 տոկոսով, քիմիական և հանքային պարարտանյութերինը՝ 17.6 տոկոսով, իսկ սև մետաղների ջարդոնի փոխադրման ծավալը նվազել է 71.7 տոկոսով, ցեմենտինը՝ 55.4 տոկոսով, անտառային բեռներինը (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլ) 54.5 տոկոսով, հանքային շինարարական նյութերինը՝ 49.1 տոկոսով, նավթ և նավթամթերք-

ներինը՝ 38 տոկոսով և սև մետաղներինը՝ 30 տոկոսով:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 32.6 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-հունիսի 30.6 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-հունիսին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության ցուցանիշը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ աճել է 8.9 տոկոսով, կազմելով 163.3 մլն. տոննա-կմ: 2000թ. հունվար-հունիսին վազոնների միջին օրական բեռնաթափումը նվազել է 3 միավորով և կազմել 48 վազոն՝ նախորդ տարվա հունվար-հունիսի 51 վազոնի դիմաց, իսկ բեռնումը նվազել է 15 միավորով և կազմել 18 վազոն: Նույն ժամանակաշրջանում 3.8 օրով դանդաղել է վազոնապտույտը:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2000թ. հունվար-հունիսին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը կազմել է 767.1 հազ.տոննա (1999թ. հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 26.8 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 13.6 տոկոս (1999թ. հունվար-հունիսի 10.3 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով՝ 22.2 տոկոս (նախորդ տարվա հունվար-հունիսի 25.8 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.8 տոկոս (նախորդ տարվա հունվար-հունիսի՝ 4.7 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով՝ 27.2 տոկոս (նախորդ տարվա հունվար-հունիսի՝ 24.1 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 83.6 տոկոս (նախորդ տարվա հունվար-հունիսի 85.0 տոկոսի դիմաց):

2000թ. հունվար-հունիսին բեռնաշրջանառությունը կազմել է 15.8 մլն.տոննա-կմ և 1999թ. հունվար-հունիսի նույն ցուցանիշի համեմատ նվազել 12.2 տոկոսով: 2000թ հունվար-հունիսին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտի բաժինը կազմել է 40.8 տոկոս՝ 1999թ. հունվար-հունիսի 46.9 տոկոսի դիմաց:

Օդային տրանսպորտ: 2000թ. հունվար-հունիսին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 5.9 հազ. տոննա (1999թ. հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 7.3 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 55.9 տոկոս (1999թ. հունվար-հունիսի՝ 70 տոկոսի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 44.1 տոկոս (1999թ. հունվար-դեկտեմբերի 30.0 տոկոսի դիմաց): Օդային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը կազմել է 4.0 մլն. տոննա-կմ և նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 25.9 տոկոսով: Օդային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 0.3 տոկոս և նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 0.1 տոկոսով:

Օդային տրանսպորտով փոխադրված բեռների 30.4 տոկոսը (1.8 հազ.տոննա) տեղափոխվել է սեփական շարժակազմով (1999թ. հունվար-հունիսի 42.2 տոկոսի կամ 2.3 հազ. տոննա բեռի դիմաց), որից 1.3 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված բեռնափոխադրումները՝ նախորդ տարվա հունվար-հունիսի 7.7 տոկոսի դիմաց:

Օդային տրանսպորտով բեռնափոխադրումները


1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

	2000 թ. հունվար-հունիս	2000թ. հունվար-հունիսը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ, տոկոսներով	2000թ. հունիս	2000թ.հունիսը 2000թ.փետրվարի նկատմամբ, տոկոսներով
Փոխադրվել են բեռներ*, հազ. տոննա	5.9	107.3	1.4	155.5
<i>այդ թվում՝</i>				
<i>սեփական շարժակազմով</i>	1.8	78.2	0.5	166.7
Բեռնաշրջանառություն* , մլն. տ/կմ	4.0	74.1	1.1	183.3

2000թ. հունվար-հունիսին 1999թ. հունվար-հունիսի համեմատ օդային կանոնավոր բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավելացել է ԱՊՀ երկրների բեռնափոխադրումների ծավալը կազմել է 57.7 տոկոս (նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի 76.5 տոկոսի դիմաց), իսկ միջազգային բեռնափոխադրումների ծավալը կազմել է 42.3 տոկոս՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 23.5 տոկոսի դիմաց:

2000թ. հունվար-հունիսին, ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն է ներմուծվել 495.0 հազ. տոննա բնական գազ և նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի համեմատ նվազել՝ 1.0 տոկոսով, իսկ բեռնաշրջանառությունը՝ 1.0 տոկոսով և կազմել 949.7 մլն տոննա-կմ: 2000թ. հունվար-հունիսին խողովակաշարային տրանսպորտի բաժինը բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 26.3 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-հունիսի 22.3 տոկոսի դիմաց:

2000թ. հունվար-հունիսին բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին միջոցների (տոկոսներով)



* Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները

Ուղևորափոխադրումներ. 2000թ. հունվար-հունիսին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 67630.3

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

հազ.մարդ, որը 1999թ. հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 1.9 տոկոսով: Հաշվետու ժամանակաշրջանում ուղևորաշրջանառությունը կազմել է 1054.2 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 3.7 տոկոսով:

2000թ. հունվար-հունիսին ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2000թ. հունվար-հունիս	2000թ.հունվար-հունիսը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ (տոկոսներով)	2000թ. հունիս	2000թ.հունիսը 2000թ. փետրվարի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	67630.3	98.1	10182.2	93.6
<i>այդ թվում՝</i>				
երկաթուղային տրանսպորտով	434.6	64.0	145.9	171.2
ավտոտրանսպորտով	52282.0	102.8	7402.5	91.5
օդային տրանսպորտով	244.7	91.1	55.3	130.4
էլեկտրատրանսպորտով	14669.0	85.5	2578.5	96.9

2000թ. հունվար-հունիսին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 0.6 տոկոս, (նախորդ տարվա 1.0 տոկոսի դիմաց), ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 77.3 տոկոս, (նախորդ տարվա 73.7 տոկոսի դիմաց), օդային տրանսպորտինը՝ 0,4 տոկոս (նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ) և էլեկտրատրանսպորտինը՝ 21.7 տոկոս (նախորդ տարվա 24.9 տոկոսի դիմաց):

Երկաթուղային տրանսպորտ: 2000թ.հունվար-հունիսին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ նվազել է 36 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 19.6 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 4.4 տոկոսով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2000թ. հունվար-հունիսին, ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ ավելացել է 2.8 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 752.1 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 2.7 տոկոսով:

Օդային տրանսպորտ: 2000թ. հունվար-հունիսին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, փոխադրվել է 244.7 հազ.ուղևոր, որի 47.8 տոկոսը (116.9 հազ. ուղևոր) կազմել է սեփական շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը:


Օդային տրանսպորտով ուղևորափոխադրումները

	2000թ. հունվար-հունիս	2000թ.հունվար-հունիսը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ (տոկոսներով)	2000թ հունիս	2000թ.հունիսը 2000թ. մայիսի նկատմամբ, տոկոսներով

Փոխադրվել են ուղևորներ*, հազ. ուղևոր	244.7	91.1	55.3	130.4
<i>այդ թվում՝</i>				
<i>սեփական շարժակազմով</i>	116.9	79.0	26.2	129.7
Ուղևորաշրջանառություն* հազ. ուղ. կմ	222.1	82.1	50.5	129.8

Սեփական շարժակազմով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալի 1.1 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված ուղևորափոխադրումները (նախորդ տարվա հունվար-հունիսի 0.5 տոկոսի դիմաց): Չարտերային չվերթների 54.4 տոկոսը բաժին է ընկել միջազգային հաղորդակցության թռիչքներին (մնացածը՝ ԱՊՀ երկրներ) 1999թ. հունվար-հունիսի 84.4 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-հունիսին կանոնավոր չվերթներով կատարված ուղևորափոխադրումների ծավալում ԱՊՀ երկրների հետ ուղևորափոխադրումների բաժինը կազմել է 75.4 տոկոս, իսկ այլ երկրների հետ՝ 24.6 տոկոս (1999թ. հունվար-հունիսին, համապատասխանաբար՝ 85.7 և 14.3 տոկոս):

2000 թ. . հունվար-հունիսին կանոնավոր չվերթներով ուղևորափոխադրումների ծավալն ըստ հաղորդակցության տեսակների (տոկոսներով)



2000թ. հունվար-հունիսին օդային տրանսպորտով փաստացի կատարված չվերթների քանակը չվացուցակով նախատեսված չվերթների քանակի նկատմամբ գերազանցել է 16.3 տոկոսով՝ ի հաշիվ չարտերային չվերթների, կազմելով 2526 թռիչք (նախորդ տարվա

* Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները

հունվար-հունիսին՝ համապատասխանաբար՝ 16.9 տոկոս կամ 2346 թռիչք): Ընդ որում, ԱՊՀ երկրների հետ հաղորդակցությամբ կատարվել է 1949 թռիչք, այլ երկրների հետ հաղորդակցությամբ՝ 577 թռիչք:

Փաստացի կատարված չվերթների 21.2 տոկոսը կատարվել է ուշացումով, որից 17.2 տոկոսն անբարենպաստ եղանակի, իսկ մնացածն՝ այլ պատճառներով:

Հաշվետու ժամանակաշրջանում օդային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 222.1 մլն.ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 17.9 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտ: 2000թ. հունվար-հունիսին, ըստ էլեկտրատրանսպորտի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, էլեկտրատրանսպորտով փոխադրված ուղևորների քանակը կազմել է 14669.0 հազ.ուղևոր և 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ նվազել 14.5 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 60.4 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-հունիսի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 15.4 տոկոսով:

2000թ. հունվար-հունիսին ուղևորների փոխադրումների ցուցանիշն, ըստ էլեկտրատրանսպորտի առանձին տեսակների

	2000թ. հունվար-հունիս	2000թ.հունվար-հունիսը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ (տոկոսներով)	2000թ. հունիս	2000թ.հունիսը 2000թ. մայիսի նկատմամբ, տոկոսներով
Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, ընդամենը, հազ.մարդ	14669.0	85.5	2578.5	96.9
<i>այդ թվում՝</i>				
մետրոպոլիտենով	7596.0	89.9	1281.2	93.7
տրամվայով	2461.2	79.7	455.7	106.0
տրոլեյբուսով	4444.9	80.5	815.0	99.2
ճոպանուղով	166.9	158.8	26.6	62.4

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2000թ. հունվար-հունիսին կազմել է 51.8 տոկոս, իսկ տրոլեյբուսով՝ 30.3, տրամվայով՝ 16.8 և ճոպանուղով՝ 1.1 տոկոս:

Տրանսպորտային պատահարներ. Հանրապետությունում 2000թ. հունվար-հունիսին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, գրանցվել է ճանապարհատրանսպորտային պատահարների 358 դեպք, որն անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 23.3 տոկոսով: Պատահարներից զոհվել է 75 և վիրավորվել 417 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 109 և 555 մարդու դիմաց:

2000թ. հունվար-հունիսին գրանցված 358 ճանապարհատրանսպորտային պատահարներից 65 տոկոսը կատարվել է քաղաքային և գյուղական բնակավայրերում (զոհվել են 33 և վիրավորվել 262 մարդ), 35 տոկոսը՝ ավտոմոբիլային ճանապարհներին (զոհվել են 42 և վիրավորվել 155 մարդ):

2000թ. հունիսի 1-ի դրությամբ 358 ճանապարհատրանսպորտային պատահարներից չեն բացահայտվել 43-ը, որոնց հետևանքով զոհվել է 10 և վիրավորվել՝ 35 մարդ: